

սեն. Ոչ կարեմք հեթանոսաց ի Պարսկաց ի ծառայութիւն մտանել, եւ թշնամի առնել զթագաւորն Յունաց, եւ ոչ զերկոսեան թշնամի առնել. եւ ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: 4 Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղել՝ ահա եղել. թող ծառայեսցուք թագաւորին Յունաց, կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց. զհարդ եւ կամք իցեն թագաւորութեան Յունաց՝ արասցեն մեզ: 5 Եւ ոչ ինչ արկին ի միտ, կամ վրեժ ինդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ:

ԳԼՈՒԽ ԼԴ.

1 Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ երկրին Յայոց յետ Պապայ:

2 Եւ եղև յետ մահուն Պապայ թագաւորին Յայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Յայոց: 3 Եկն բազում շքով եմուտ յերկիրն Յայոց, եւ թագաւորեաց յերկրին Յայոց: 4 Եւ եր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռաւք, քաջ սրտիւ, եւ ի մտաց թեթել, մանգաբարոյ տղայահասնճար մանկամիտ: 5 Բայց սակայն իբրեւ տեսին զնա, ժողովեցան առ նա ամենայն ազգք Յայոց մեծամեծք նախարարք, եւ կամեցեալ ինդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց:

6 Եւ սպարապետն Յայոց Սուշեղ առաջնորդէր Յայոց. եւ զգուշանայր զսահմանաւքն Յայոց, որպէս սովոր եր կարգել զաշխարհ մեծապէս. եւ իրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր: 7 Եւ հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Յայոց, եւ զհարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. եւ հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն: 8 Խորհէր եւս ընդ իշխանսն Յունաց, եւ նոքաւք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Յայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զաւրանխստս հաստատել ընդ ամենայն երկիրն Յայոց, մինչեւ ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ եր, Յայոց սահման եր. եւ զամենայն ազատսն Յայոց կայսերական թոշակաւքն զինուորել. սոյնպէս եւ զաւրաց երկրին Յայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց ի զաւրացն Պարսից: 9 Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ ինդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի եւ անշարժ ի նմանէն, զի մի՛ կարասցէ թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Յայոց: